# Գորբաչովը մեղադրում է մամուլի ներկայացուցիչներին. «Ինչո՞ւ եք անտեսում թուրքերի դրությունը»

*Թուրքական «Թերջուման» թերթը, հենվելով Անատոլիական գործակալության վրա, հունիսի 8-ի համարում հրապարակել է Միխայիլ Գորբաչովի մամուլի ասուլիսի վերաբերյալ մի հոդված, որը վերջերս կայացել էր Օսլոյում: Ասուլիսում պրեզիդենտն իր դժգոհությունն էր հայտնել մամուլի ներկայացուցիչներին՝ աշխարհում ու ԽՍՀՄ-ում տեղի ունեցող իրադարձություններին տարբեր չափանիշներով մոտենալու մեջ: Հոդվածն իմաստով, անկախության ուղին բռնած հանրապետությունների հանդեպ կենտրոնի քաղաքականության գորբաչովյան մեկնաբանություն է: Հրապարակելով այն «Արևմտյան մամուլից ձանձրացել նաև Գորբին» ենթավերնագրով, «Թերջումանը» կարծես հավանություն է տալիս այդ մեկնաբանություններին, քանի որ պրեզիդենտը, հասարակայնության ուշադրությունը ասուլիսում բարձրացված հարցերից շեղելու նպատակով, «մտահոգություն» է հանդես բերում Եվրոպայում ապրող թուրք բանվորների իրավիճակի առնչությամբ: Ստորև տալիս ենք վերոհիշյալ հոդվածի թարգմանությունը:*

«Թերջուման» հունիսի 8.- Պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովը արևմտյան մամուլին մեղադրեց Խորհրդային Միության հանդեպ այլ կարգի չափանիշներ կիրառելու մեջ: Գորբաչովը, որ Նորվեգիայում էր գտնվում խաղաղության Նոբելյան մրցանակը ստանալու առթիվ, Օսլոյում կայացած մամուլի ասուլիսում առաջ քաշեց այն տեսակետը, թե արևմտյան լրագրողները միտումնավոր ձևով խեղաթյուրում են ազգամիջյան փոխհարաբերությունների խնդիրները Միության մեջ: Լիտվայի վերջին իրադարձությունների վերաբերյալ լրագրողների անընդհատ հարցադրումներին Գորբաչովը բավականին զայրացել և ասել է, թե դրանք տեղական բնույթի իրադարձություններ են, հետևաբար դրանց կարևորությունը գերագնահատելու կարիք չկա:

Երբ լարվածությունն ուժեղանում է Մերձբալթիկայում,- ասել է Գորբաչովը,- Արևմուտքն անմիջապես արձագանքում և Միությանն անվանում է խորհրդային կայսրություն, խոսում հեղաշրջման փորձի և աղմուկ-աղաղակ բարձրացնում «պերեստրոյկայի» վախճանի մասին: Բայց երբ ռուսները ու ուկրաինացիները այլ հանրապետություններում ենթարկվում են էթնիկական ճնշումների, այդ մասին բոլորը լռում են: Այնուհետև պրեզիդենտը դիմելով լրագրողներին, հարցրել է. *«Ասացեք խնդրեմ, ո՞րն է ձեր ելակետը, ինչպիսի չափանիշներով եք առաջնորդվում»*:

Ինչպես նշել է խորհրդային պրեզիդենտը, մինչ այդ Լիտվայում տեղի ունեցած արյունալի իրադարձությունների գլխավոր պատասխանատուն հենց Լիտվայի ազգայնամոլ վարչակարգն է: Մինչև օրս չի հայտնաբերվել թեկուզ մի փաստ, որն ապացուցի, թե 1990 թվականի հունվարյան ցույցերի ժամանակ քաղաքացիներից որևէ մեկը սպանված լիներ զինվորների կողմից: Գորբաչովը խոսքն ուղղելով Մերձբալթյան հանրապետությունների ու Վրաստանի իշխանություններին, որոնց նա մեղադրել էր ազգային լեզուն արտոնելու, այլազգիների հանդեպ խտրականություն ցուցաբերելու, վերջիններիս քաղաքացիական իրավունքները ոտնահարելու մեջ, ասել է. *«Սրանք այն ղեկավարներն են, որոնք մի կողմից փողոցներում «պերեստրոյկայի» կրախի մասին ճառեր են արտասանում, մյուս կողմից հանրապետության այլազգի քաղաքացիների իրավունքները սահմանափակելու վերաբերյալ որոշումներ ընդունում: Սա ոչ թե դեմոկրատիա է, այլ պարզապես ազգայնամոլություն»*:

Արևմուտքը,- ասել է Գորբաչովը, օտարերկրացի բանվորների հանդեպ կատարվող խտրականությունը վերացնելու, նրանց բարվոք կացությանն անդրադառնալու փոխարեն խորհրդային վարչակարգի հանդեպ անընդհատ մեղադրանքներ է հարուցում, թե Միության մեջ էթնիկական հանրությունները ենթարկվում են անողոք ճնշումների: Նման մոտեցումը բնութագրելով որպես զույգ չափանիշների կիրառում, նա ավելացրել է. *«Ոչ մեկի համար գաղտնիք չէ, թե ինչեր են կատարվում աշխատանք որոնելու նպատակով Արևմուտք ժամանած թուրքերի ու հարավսլավացիների հետ. ո՞վ չգիտի, թե նրանք ինչպիսի անհավասար պայմաններում են հայտնըվում»*:



Գ. Չ.